

*«Զինվորի մայր» կազմակերպությունը իր երախտագիտությունն է հայտնում  
ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին  
գրքի տպագրությանն աջակցելու համար:*

*Չոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքների անունից շնորհակալություն  
ենք հայտնում լուսահոգի Արման Բեդիկյանին և Թուֆենկյան ընտանիքի  
հիմնադրամին դասընթացի կազմակերպմանը նյութական աջակցություն  
ցուցաբերելու համար:*

Շնորհակալություն ենք հայտնում նաև այն համալսարանների ղեկավարներին, ովքեր  
հնարավորություն են տվել մեր երեխաներին օգտվել արտոնություններից:

*Համոզված ենք, որ «Զինվորի մայր» կազմակերպությունը՝  
հիմնական առաքելությանը գուրդնքաց պահպանելով մշտական  
կապը զինծառայողների ընտանիքների հետ, ևս մեկ անգամ  
սպացուցում է հասարակության մասնակցության  
անհրաժեշտությունը երկրի և քաղաքացիական  
հասարակության կայացման գործընթացում:*

Խմբագրական կոլեգիա.

Գ. Միրզոյան՝ պատասխանատու խմբագիր,

Ա. Հովնանյան, Ե. Աբրահամյան

## **Միտելի հայրենակիցներ.**

Հայաստանի «Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը մեծ ու համախմբված կոլեկտիվ է, որի առաքելությունն է. Հայաստանի հանրապետության տարածքում բարոյահոգեբանական, սոցիալական և իրավական օգնություն ցուցաբերել զինծառայողներին և նրանց ընտանիքներին: Նախաձեռնության առաջին իսկ օրվանից կազմակերպության բոլոր անդամները ներգրավվեցին աշխատանքներին՝ ոգեշնչված երկրի շահերի պաշտպանության ազնիվ մղումով: Միավորման գաղափարն այնքան բնական էր, որ ոչ մեկն անգամ մեկ ակնթարթ չէր մտածում անձնական շահի մասին, ամեն ենթարկվում էր միայն մեկ շարժող ուժի՝ Հայրենիքին օգնելու անհրաժեշտությանը:

Այդ պոռթկումը ավելի քան 500 կանանց բերեց հիվանդանոցներ, երբ կարիք ծագեց խնամել մարտի դաշտից բերված վիրավոր զինվորներին և աշխարհագորայիններին: Ոչ մի կին չէր տրտնջում, չէր դժգոհում ծանր աշխատանքից: Բոլորը գիտակցում էին, որ դա կարևոր է և անհրաժեշտ: Այդ միասնական ոգով էլ ստեղծվեց կազմակերպությունը:

Հետո եղան այլ սխրանքներ, երբ կազմակերպությունն անխուսափելի մահից փրկեց 209 թափառաշրջիկ երեխաների, հավաքեց նրանց Երևանի, Լենինականի, Սպիտակի և Ճամբարակի փողոցներից և տարավ Իրանական Իսլամական Հանրապետություն՝ հայկական ընտանիքներ: Շնորհակալ ենք Իրանի Սփյուռքին՝ հայրենասիրական կամքի համար, շնորհակալ ենք մեզ օգնության ձեռք մեկնած Իրանական ղեկավարությանը: Մեր բոլոր երեխաները ողջ և առողջ վերադարձան տուն:

Հետո եկավ մայիս ամիսը, եկավ հաղթանակը և սկսվեց բազմազբաղ առօրյան. կազմակերպությունը առաջին օրվանից մասնակցեց ազգային բանակի ստեղծման և կայացման գործընթացին: Որքան արցունք կար պատերազմից հետո, որքան դժբախտ մայրեր... Բայց պետք էր գոտեպնդվել և գոտեպնդել նրանց, հզորանալ հոգով և սրտով՝ տանելու համար այդ ծանր բեռն ու ապրելու համար: Եվ սկսվեցին մեծ գործեր, նախագծեր, ծրագրեր:

1994 թվականին մեր դուռը թակեցին ծնողագուրկ երեխաները, ովքեր ցանկանում էին սովորել, սակայն գիտելիք չունեին, իսկ բուհ ընդունվելու համար հարկավոր էին հիմնավոր գիտելիքներ: Նրանց համար այդ նույն տարին ստեղծեցինք նախապատրաստական դասընթաց, որը գործում է մինչ օրս:

Առաջին տարին՝ լի հայրենասիրական մղումներով, աշխատում էինք առանց աշխատավարձի: Սակայն լավ գործը առանց ուշադրության չի մնում: Առաջինը օգնության ձեռք մեկնեց ՀՀ պաշտպանության նախարարությունը, իսկ մեկ տարի անց մեզ մոտ եկավ բարերար Արման Բեդիկյանը ամերիկյան Նյու-Ջերսի քաղաքից և առաջարկեց իր օգնությունը՝ դասընթացի ֆինանսավորման հարցում: Արման Բեդիկյանի աջակցությունը տևեց մինչև իր կյանքից հեռանալը և շարունակվեց նրա մահից հետո նրա կտակի շնորհիվ՝ Հայ Օգնության Ֆոնդ կազմակերպության միջոցով: Որոշ

Ժամանակահատվածում այս ծրարգրին միացավ նաև Թուֆենկյան ընտանիքի հիմնադրամը:

Մենք երախտապարտ ենք բոլոր նրանց, ովքեր օգնության ձեռք են մեկնել մեր երեխաներին, հաշմանդամներին: Մենք հպարտանում ենք մեր երեխաներով, ովքեր դարձել են բժիշկներ և իրավաբաններ, ինժեներներ և ուսուցիչներ, մեր երկրի տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող մասնագետներ:

Կարծում ենք, որ այն հասարակական կազմակերպությունը, որը հետպատերազմյան ծանր տարիներին կարողացել է հասնել զարգացման այս մակարդակին և ստանալ այսպիսի իրական արդյունքներ – 17 տարվա գործունեության ընթացքում պատրաստել շուրջ 700 դիմորդներ, որոնցից 420-ը ավարտել են ՀՀ տարբեր բուհեր և դարձել դիպլոմավորված մասնագետներ – մեծ հաղթանակ է տարել գործունեության այս ասպարեզում:

Մեր դռները միշտ բաց են նրանց համար, ով աշխատում է բանակի հետ:

Այսօր կազմակերպության առջև ծառայել են այլ բարդ խնդիրներ՝ ոչ կանոնադրական հարաբերություններին, բանակում մահվան դեպքերին հանգեցնող պատճառների վերլուծությունն ու վերհանումը, աջակցությունը սպայական կազմի բարոյահոգեբանական կայացման գործընթացին և այլն: Կամկերպությունն ակտիվ մասնակցում է նաև զինված ուժերում քաղաքացիական վերահսկման գործընթացին:

Բանակում տեղի ունեցած ամեն մի դեպք յուրահատուկ է, պահաջում է առանձին մոտեցում: Պետք է լսել կողմերին, վերլուծել իրադրությունը, օգնել զինվորների ծնողներին հաղթահարել դժվարություններ: Մեծ ուշադրություն ենք դարձնում զորակոչիկների ընտանիքների նախապատրաստմանը բանակային ծարայությանը, կազմակերպում ենք նրանց հետ հանդիպումներ և սեմինարներ մարզերում: Կազմակերպությունը սերտ աշխատում է զինկոմիսարիատների հետ, քանի որ դեռևս 1997 թվականից կազմակերպությունը պաշտոնապես հանդիսանում է զարակոչային հանձնաժողովի անդամ:

Մենք մտահոգված ենք հիվանդ երիտասարդների զորակոչի հանգամանքով: Հասկանալի է, որ 1991-93 թվականների ծնված երեխաների մոտ ակնհայտ են առողջական խնդիրներ<sup>1</sup>: Ցավոք, դեռ որոշ ժամանակ է պետք՝ 4-5 տարի, որպեսզի իրավիճակը փոխվի, և զինկոմիսարիատները ստիպված չլինեն տրված թվաքանակն ապահովելու համար զորակոչել առողջական խնդիրներ ունեցող երիտասարդներին: Հուսով ենք, որ այդ ժամանակը կգա, և կնվազի ծնողների անհանգստությունը:

Ազգային բանակի հիմնական ուժը նրա զինվորների ոգու ամրությունն է: Եթե անկեղծ լինենք, այլ ընտրություն և այլ ուղի չկա:

Մեզ դեռ շատ փորձություններ և դժվարություններ են սպասում, որոնք պետք է հաղթահարվեն: Կարծում ենք, որ մեր կազմակերպության ընդհանուր փորձը, թեկուզև նախապատրաստական դասընթացի օրինակի վրա, երաշխիք է հանդիսանում նորանոր հաղթանակների համար:

---

<sup>1</sup> ԱՊՀ այլ երկրների մեր գործընկերների հետ աշխատանքի արդյունքում պարզվում է, որ այս վիճակն ընդհանուր է բոլոր նախկին Խորհրդային միության երկրների մոտ՝ շատ է հիվանդ զորակոչիկների թիվը:

Մի հին պատմական ճշմարտություն կա՝ «Այն երկիրը, որը չի գնահատում հանուն իրեն, հանուն իր զավակների թափված արյունը, հաջորդ պատերազմում դատապարտված է պարտության»: Այս հին ճշմարտությունը լավագույնս յուրացրել են «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության անդամները:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող տասնյակ հասարակական կազմակերպությունների շարքում, «Զինվորի մայր» կազմակերպությունը շահեկանորեն առանձնանում է իր մայրական հոգատարությամբ, գործունեության նպատակասլացությամբ:

Կազմակերպության մի շարք հայրենասիրական նախաձեռնություններից կցանկանալի առանձնացնել մեկը՝ զոհված և վիրավոր զինծառայողների երեխաների համար անվճար նախապատրաստական դասընթացի կազմակերպումը: Սկսած 1994 թվականից «Զինվորի մայր» ՀԿ-ն կազմակերպում է զոհված և վիրավոր զինծառայողների երեխաների համար անվճար նախապատրաստական դասընթացը, ուր մեկ տարվա ընթացքում ունկնդիրները ստանում են գիտելիքներ հանրակրթական պետական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաների գծով:

Կատարված աշխատանքների արդյունավետությունը ուրախալի և տպավորիչ է՝ անցած 17 տարիների ընթացքում դասընթացներում ընդգրկվել են ավելի քան 700 երեխաներ, որոնցից 420-ը հաջողությամբ ընդունվելով տարբեր բուհեր, ավարտել են և ստացել բարձրագույն կրթությամբ մասնագետի որակավորում: Կարծում են՝ այս փաստը իրենց կյանքը հանուն Հայրենիքի զոհած հերոսների սերնդի նկատմամբ հոգատարության, նրանց ապագայի հանդեպ վստահության և հավատի ներշնչման դրսևորում է: Մենք պարտավոր ենք ջերմությամբ և հոգատարությամբ շրջապատել նրանց:

«Թող թևահարեն մեր զավակները» ալբոմը յուրօրինակ հաշվետվություն է կատարված աշխատանքի մասին: «Զինվորի մայր» կազմակերպությանը մաղթում են մոռ հաջողություններ իր հայրենանվեր ձեռնարկումներում և հավաստիացնում են, որ նմանատիպ ցանկացած հայրենանվեր ծրագիր կարժանանա ՀՀ պաշտպանության նախարարության համակողմանի աջակցությանը:

**Հարգանքով՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյան**